# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Այսօր զգալի ուժեր են նպատակամղված «1988–1995 թթ. Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման կատարմանը: Այս օրերին Ստեփանակերտ են ժամանում գերատեսչական հանձնաժողովներ, որոնք որոշում են նախանշվածի կենսագործման միջոցառումները:

Բաքվի ինստիտուտներում պատրաստվում են մարզային հիվանդանոցի, դպրոցների, կահույքի ֆաբրիկայի, խտացված կերերի գործարանի, Բադարա գետի վրա ջրամբարի, Ստեփանակերտի, մի շարք շրջկենտրոնների և բնակավայրերի կոյուղու և ջրամատակարարման համակարգի նախագծերը: Իսկ շինարարները վաղօրոք պատրաստվում են մարզում մեծ ծավալի շինմոնտաժային աշխատանքներ կատարելուն: Ստեփանակերտ են ուղարկվել տեխնիկայով, նյութերով, ճանապարհային և շինարարական մեքենաներով բեռնված առաջին քարավանները:

—ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման կենսագործման ուղղությամբ առաջին քայլերը կատարված են,—ասաց Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, հանրապետության պետպլանի նախագահ Ա. Մութալիբովը:— Սակայն գտնում եմ, որ այդ աշխատանքը կարող է և պետք է տարվի ավելի ինտենսիվ ձևով, մասնավորապես շինարարների, կապալառուների, տրանսպորտայինների կողմից: Մի շարք մինիստրությունների ղեկավարներ դանդաղ են գործի անցնում, ինչպես նախկինում, ցուցումների են սպասում վերևից: Իհարկե, ծագող դժվարությունները մեզ համար հասկանալի են: Գերատեսչությունները աշխատում են ձևավորված խիստ պլանի պայմաններում: Բացի դրանից, նրանք իրավունք չունեն մոռանալ հանրապետության մյուս ռեգիոնների մասին, ընթացիկ գործերի մասին: Սակայն, կարծում եմ, Լեռնային Ղարաբաղի զարգացման ծրագրի շուտափույթ իրականացումը Ադրբեջանի բոլոր աշխատավորների պատվի գործն է: Մենք բոլորս պետք է լուրջ հետևություններ անենք այն քննադատությունից, որ արվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նիստում:

Քաղաքացիական ավիացիայի մինիստրության հանձնաժողովը այն հետևության է հանգել, որ բարդ ռելիեֆով տեղանքում գտնվող Ստեփանակերտի հետ կարելի է կապ պահպանել ամենաժամանակակից ինքնաթիռների օգնությամբ:

—Քաղաքում գործող ավիատնտեսությունը,— ասաց հանձնաժողովի նախագահ, «Աէրոպրոեկտ» պետական նախագծային և գիտահետազոտական ինստիտուտի պետ Վ. Իվանովը,— թույլ է տալիս թռիչքներ կատարել միայն տեսողական ռեժիմով, որը բարդացնում է ինքնաթիռների վայրէջքը լեռնային տեղանքում: 13-րդ հնգամյակում Ադրբեջանի շինարարների և ավիատորների հետ միասին մենք կվերացնենք այդ բարդությունը: Արդեն եկող տարի ինստիտուտը կրտա տեղի օդանավակայանում ժամանակակից ռադիոնավիգացիոն սարքավորումներ տեղակայելու, նոր օդանավակայանի շինարարության աշխատանքային առաջին գծագրերը:

Իսկ Հայաստանի կոմկուսի Մաշտոցի շրջկոմի առաջին քարտուղար Ա. Գեղամյանը ՏԱՍՍ-ի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ նշեց, որ Ղարաբաղի պրոբլեմի վերաբերյալ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նիստում այն անհանգստությունը արտահայտվեց, որ ինքը մարզը չի կարող լրիվ ծավալով յուրացնել հատկացված միջոցները: Ուստի «Հայավիաշին» տրեստի աշխատողներ Օ. Զաքարյանը, Ա. Ավանեսյանը, Մ. Խաչատրյանը և ուրիշներ առաջարկեցին մասնակցել ԼՂԻՄ-ի զարգացման ծրագրի կենսագործմանը: Այդ առաջարկությանը հավանություն տվեց աշխատավորական կոլեկտիվի խորհուրդը: Տրեստի կառավարիչ Օ. Ղազարյանը գտնում է, որ հայրենասիրությունը պետք է արտահայտվի ոչ թե խոսքերի ճարճատյունով, այլ կոնկրետ գործերով: «Հայավիաշինը» կարող է յոթ տարում պետական պատվերներից ավելի յուրացնել 20 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ: Տրեստը պատրաստ է սկսելու օդանավակայանի համալիրի շինարարությունը Ստեփանակերտում:

Մաշտոցի շրջկոմի բյուրոն հավանություն է տվել նախաձեռնությանը և «Հայավիաշինի» կոլեկտիվին պաշտպանել են արդեն շատ ձեռնարկություններ: Օրինակ, «Հայագրոշինի» Սպանդարյանի երկաթբետոնե կառուցվածքների գործարանի աշխատողները պարտավորվել են մինչև տարվա վերջը թողարկել հազար խորանարդ մետր երկաթբետոնե շինվածքներ: «Ագրոշիննորոգում»-12 տրեստի աշխատավորական կոլեկտիվի խորհուրդը որոշել է շահույթների հաշվին և պետական պատվերներից դուրս ըստ տիպային նախագծերի Ստեփանակերտում կառուցել 3–4 սենյականոց չորս բնակելի շենք: Իսկ «Զակտրուբոպրովոդստրոյ» տրեստը պարտավորվել է կառուցել Գորիս–Լաչին–Ստեփանակերտ ավտոմայրուղին: Բուժաշխատողները պլանավորում են մասսայական դիսպանսերացման համար բժիշկներ ուղարկել ԼՂԻՄ: Նրանք կօգնեն կոլեգաներին ախտորոշման կենտրոն ստեղծելու գործում:

Մեր նախանշած աշխատանքների ամբողջ ծավալը կիրականացվի սահմանված պետական պատվերներից դուրս: Կարծում եմ, որ մեր նախաձեռնությունը կպաշտպանեն հանրապետության աշխատավորական բոլոր կոլեկտիվները և դրանով իսկ մենք ավանդ կմտցնենք Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման գործում կուտակված պրոբլեմների լուծման մեջ, նշեց քարտուղարը:

Ահա ևս մեկ փաստ: Ադրբեջանի հրատպետկոմի կողմից կազմակերպված հանձնաժողովը որոշել է, որ իմաստ չունի վերակառուցել Ստեփանակերտի հին տպարանը: Նրա փոխարեն կկառուցվի տարեկան քսան միլիոն արտատիպ- թերթ կարողությամբ նոր տպարան: Այստեղ օֆսեթ եղանակով կտպագրվեն մարզային և շրջանային թերթերը, կբացվի հայերեն լեզվով գրքերի և գրքույկների թողարկման արտադրամաս: Նույն տարածքում կտեղադրվեն թերթերի խմբագրությունների շենքը, պահեստներ:

Աշխատանքները ծավալվում են: Եվ կարելի է վստահությամբ ասել, որ հաջողությամբ կիրականացվի ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը:

(ՏԱՍՍ-ի թղթ.)